

MESROVB J. SETH. *Armenians in India (From the earliest times to the present day a work of original research)*, Calcutta, 1983, p. 629.

Հնդկաստանի հայկական գաղթօջախների պատմության տարբեր հարցերին նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, հրատարակվել են հարյուրավոր վավերագրեր, Այդ աշխատանքը այսօր էլ շարունակվում է:

Ուսումնասիրվող հարցի համար արտակարգ բարձր արժեք ունեն հնդկահայ գաղթօջախների պատմության խոշոր մասնագետ, հնդկահայ Մեսրոբ Հակոբ Սևթի (Սեթյան) ուսումնասիրությունները և հրապարակումները: Այս անխնայ և պրպտող գիտնականը գրեթե իր ողջ կյանքը ներվիրել է հայ-հնդկական հարաբերությունների և հնդկահայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության հարցերին: Դեռևս 1895 թ. Սեթը խնդրում հրատարակել է «Հայերը Հնդկաստանում» ոչ ընդարձակ մի աշխատություն: Ոգևորված իր գործի հաջողություններով, նա իր կյանքի հետագա քառասուն տարիների ընթացքում շրջել է գրեթե ողջ Հնդկաստանը, եղել է նրա մեծ ու փոքր այն բոլոր քաղաքներում, ուր ապրում էին և կամ նախկինում ապրել էին հայեր, հավաքել է բազմաթիվ արժեքավոր փաստեր սկսած տապանագրերից, վերջացրած ականատեսների պատմածներով, կարդացել է տասնյակ սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ, թերթեր և բազմաթիվ ուղեգրություններ և հուշագրություններ պարսկերեն, հինգի, անգլերեն, ֆրանսերեն ու եվրոպական այլ լեզուներով, աշխատել է բազմաթիվ արխիվներում և, հավաքելով փաստերի մեծ ու հարուստ պաշար, գրել և հրատարակել է մի ամբողջ շարք համառոտ ու ընդարձակ ուսումնասիրություններ՝ նվիրված հնդկահայության առանձին շրջանների պատմության տարբեր հարցերին:

Նրա հրատարակած աշխատություններից կարելի է նշել «Գորգին խան (Բենդալիայի նավար Միր Քասիմ խանի զորահրամանատարը 1760—1763 թթ.)», «Խոջա Խորաջև Սահրատ (հայազգի վաճառական դիվանագետը Կալկաթայում 1756—1763 թթ.)», «Հայերն Ագրայում և Գվալիորում», «Հնագույն քրիստոնյա շիրիմը Կալկաթայի մեջ», «Գրիչ, ոսկեգրիչ մատենագիրը (Մեսրոպ Թա-

դիադյան)», «Հայերը Չանդերնագորում» և այլն, որոնք լույս են տեսել թե՛ հայկական ու օտար մամուլում և թե՛ առանձին գրքուկներով:

Մ. Սեթի վերոհիշյալ և մի շարք այլ ուսումնասիրություններ, թվով քառասունութ, մտան նրա «Հայերը Հնդկաստանում (հնագույն շրջանից մինչև մեր օրերը)» 1937 թ. անգլերեն լեզվով կալկաթայում հրատարակված ժողովածուի մեջ: Հաշվի առնելով գրքի արժեքը և այն հանգամանքը, որ խիստ սահմանափակ քանակով հրատարակված ժողովածուն այսօր դարձել է փրկիտգրաֆիկ հազվագյուտ նմուշ, Կալկաթայի հայոց եկեղեցու խորհուրդը վերահրատարակել է այն:

Գրքի առաջին մի քանի գլուխները նվիրված են Ագրայի հնագույն գաղթօջախի պատմության հետևողական տարբեր հարցերին: Նրա ուսումնասիրություններից և հատկապես բերված հարուստ փաստերից իմանում ենք, որ Մեծ Մոգոլի կայսրության մայրաքաղաք Ագրայում հայերը մեջտեղացան քանակության և հաստատվել ՎՄԻ դարի կեսերից սկսած: Բերված փաստերը խոսում են այն մասին, որ Հնդկաստանի գահակալ Ջալայուդդին Աբբասը (1556—1605) ինքն է անձամբ հայերին հրավիրել Ագրայում հաստատվելու, նրանց 5000 քիզհա հող է հատկացրել, պետության հաշվին եկեղեցի կառուցել: Օգտվելով Հնդկաստանի գահակալի հրավերից և հովանավորությունից՝ բազմաթիվ հայեր են եկել Ագրա, հաստատվել այնտեղ, կառուցել տներ, առևտրական հիմնարկներ և լայն գործունեություն ծավալել:

Աբբասը շատ հայերի պալատում բարձրագույն պաշտոններ է տվել: Հայտնի են բազմաթիվ դիվանագետներ, թարգմանիչներ, բժիշկներ, վարչական ապարատի ծառայողներ և այլն: Ի դեպ, հայուհի է եղել Աբբասի թագուհիներից մեկը՝ Մարիամ Ջամանի Բեգումը, որի դամբարանը այսօր էլ կանգուն է Ֆաթեհիուդ Սիբրիի գերեզմանատանը:

Ոչ միայն Ագրայի, այլև ողջ հնդկահայ և հայ-հնդկական հարաբերությունների պատմության

մեջ առավել նետաքրքիր դեմքերից է հայազգի պետական-քաղաքական գործիչ, բանաստեղծ, երգահան Ալեքսանդր Զուլ-Գարնայնը: Նրա մասին նույնիսկ ավանդազրույց է ստեղծվել, որ նա Աքքարի որդեգիրն է եղել:

Ալեքսանդր Զուլ-Գարնայնը, «Ջահանգիր Նամեհ», «Փաղիշա՝ Նամեհ», ժամանակի բազմաթիվ այլ աղբյուրների վկայությունների համաձայն (որոնք լանասիրաբար բերել է Մ. Սեթը) հասել է Մեծ Մողոլի խոշոր մարզերից մեկի՝ Ջամրահարի կառավարչի պաշտոնին: Հետագայում, երբ լարված հարաբերություններ են ստեղծվել Հընդկաստանի գահակալ Ջահանգիրի և Զուլ-Գարնայնի միջև, վերջինս հեռացել է քաղաքական ասպարեզից և իրեն նվիրել բանաստեղծությանը, երգին և երաժշտությանը: Նրա մասին, որպես Հնդկաստանի խոշորագույն պոետի և երաժշտի, խոսում է անգամ ինքը՝ Ջահանգիրը: Այս ամենը մանրամասն ներկայացված է Սեթի գրքի բերք գլուխներում:

Գրքի ժայռերը Մադրասում ընդարձակ գլուխը բաղկացած է տասը մեծ ու փոքր բաժիններից: Հնդկական ուսումնասիրություններից և բերած փաստերից երևում է, որ Հնդկաստանի բրեելյան՝ կորմանդելյան ծովափնյա առևտրաշահ քաղաքներին հայերը ծանոթ էին և առևտրական գործարքներ էին կատարում դեռևս 780 թ. սկսած, իսկ մնայուն գաղթօջախներ են հաստատվել XVI դարի սկզբից: Այնքան մեծ պետք է եղած լինի Մադրասում և նրա շրջակայքում հայերի թիվը, որ նրանք 1547 թ. եկեղեցի կառուցեցին: Մ. Սեթը Բրիտանական թանգարանի արխիվից հայտնաբերել և իր գրքի այս բաժնում հրատարակել է Մալաբարի հայազգի կառավարի՝ Անգլիայի թագավոր Կարլոս II-ին գրած երկու նամակները, որ ստորագրված են հայերեն:

Այս գլխում ամենից հետաքրքիրն, իհարկե, Շահամիր Շահամիրյանին նվիրված բաժինն է: Հայտնի է պրոֆ. Լեոյի և նրան հետևող ուսումնասիրողների ենթադրությունը, թե Շահամիր Շահամիրյանը Մադրաս է եկել Նոր Զուլայից XVII դարի կեսերին, բացել է դերձակի կամ գլխարկ կարողի փոքրիկ խանութ, որոշ գումար ձեռք բերելուց հետո զբաղվել մարգարիտի վաճառականությամբ: Մ. Սեթի բերած փաստերը խոսում էին այն մասին, որ Շահամիրը Հնդկաստանում, իրանում և այլուր բազմաթիվ առևտրամատենների, տոկոսներով մեծ գումարներ տվող դրամատենների, առևտրանավերի տեր, միլիոններ շրջանառության մեջ դրած, հնդկական շահաների և նավարների հետ մտերմություն ունեցող Դավիթ Սուլթանում Շահամիրյանի որդին է: Մեր ձեռքի տակ էան լոնդոնի Բրիտանական թանգարանից ստացված բազմաթիվ վավերագրեր, որոնք խո-

սում են այն մասին, որ հազարների հասնող դրամական գործարքներ էր կատարում նաև Շահամիրի մայրը՝ Աննա Խաթունը: Այնպես որ Շահամիր Շահամիրյանը Հնդկաստան է հասել ոչ թե որպես մի «խեղճ դերձակ», այլ միլիոնների երիտասարդ ժառանգորդ:

Սուրաթի հայ գաղթօջախի հաստատման ժամանակը ճշտելու գործում ևս Մ. Սեթին օգնություն են հասել հայերեն արձանագրությունները, որոնցից հնագույնը 1579 թ. է: Այս գաղթօջախի ամենից բարգավաճ շրջանը, անշուշտ, հանդիսացել է XVII դարը: 1630—1660 թթ. հայերը այստեղ ունեին կազմակերպված համայնք՝ Խոշա փանոս Քալանթարի և Խոշա Մինասի գլխավորությամբ: Հայերի առևտրական տները և ընկերությունները ակտիվ դեր էին խաղում Հնդկաստանից Սուրաթի ճանապարհով Եվրոպայի և Ասիայի երկրներ մետաքսի, համեմունքի, թանկագին քարերի արտահանման գործում: «Հայերը նուրաթում» բաժնում բերված փաստերը խոսում են այն մասին, որ Սուրաթի հայերը իրենց առևտրական գործարքները կատարում էին սեփական նավերով, որոնց մեջ կային նաև օվկիանոսային նավեր:

Գրախոսվող աշխատության ընդարձակ գլուխներից մեկը նվիրված է Բոմբեյի հայերին: Հայերը Բոմբեյում հաստատվել էին դեռևս նախքան 1661 թ. համանուն կղզու և փոքրիկ քաղաքի անգլիացիներին անցնելը: Սկսած 1666 թ., երբ Բոմբեյը դարձավ անգլիացիների վարչատնտեսական կենտրոնը Հնդկաստանի արևմտյան ծովափին, Սուրաթից, Լահորից և մյուս վայրերից բազմաթիվ հայեր եկան Բոմբեյ և ստվարացնելով տեղի գաղթօջախը՝ կազմակերպված բնույթ տվեցին նրան:

XVII—XVIII դ. Բոմբեյի հայկական գաղթօջախը, ինչպես վկայում են անգլիական բլանաշ գրքերն ու «տարեգրությունները», որոնցից քաղվածքներ է բերել Մ. Սեթը, զգալի գեր էր խաղում Հնդկաստանի այս շրջանների տնտեսական կյանքում:

Լոնդոնից ուղարկված հանձնարարականում Բոմբեյի խորհրդին առաջարկվել է հատուկ ուշադրություն դարձնել հայերի վրա, որպես քրիստոնյաների: Բոմբեյի խորհուրդը Հնդկաստանի և Իրանի հայաշատ վայրերը ուղարկած հրավերներում անգլիական զինվորական ծառայության մեջ մտնող հայերին խոստանում էր բարձր աշխատավարձ, անգլիական զինվորի իրավունքներ և արտոնություններ, անգամ ճանապարհաժախս, բնակարան և այլն: Բոմբեյի խորհրդի Լոնդոն ուղարկած զեկուցագրերից, որոնք դարձյալ բերել է Մ. Սեթը, հայտնի է դառնում, որ ոչ մի հայ, ոչ մի արտոնյալ պայմաններով ցանկություն չի հայտնել ծառայել անգլիական զորքերում:

Հայտնի էր, որ Բենգալիայի անգլիական առաջին սեթլեմենթի ղեկավար Չոպ Չարնոքին 1690 թ. հաջողվեց Մեծ Մոզոլի կառավարողներից ձեռք բերել Հուդլի գետի գետաբերանի մոտ գտնվող երեք գյուղերը և նրանց տարածքում հիմնեց ամրոց: Հետագայում այդ ամրոցի շուրջը բարձրացավ մի քաղաք, որը հայտնի դարձավ գյուղերից մեկի՝ Կալկաթայի անունով:

1694 թ. Մ. Սեթլը, ի զարմանս շատ-շատերի, Կալկաթայի տարածքում հայտնաբերեց հայկական արձանագրություններով շիրմաքարեր, որոնցից հնագույնը 1630 թ. էր: Այս փաստը հաստատեց Կալկաթայի պատմության հայտնի մասնագետ Ս. Վիլյամսի այն ենթադրությունը, որ հայերը Հնդկաստանի այս շրջաններում հաստատվել էին անգլիացիների գալուց շատ առաջ:

Այս հետաքրքիր հարցին է նվիրված Մ. Սեթլի գրքի «Հայերը Կալկաթայում» ընդարձակ բաժնի «Ամենահին քրիստոնյա շիրիմը Կալկաթայում» հաղորդումը, որը տարբեր լեզուներով ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Գրքի նույն բաժնի «Հայերն իբրև քաղաքական հենարան Հնդկաստանում (խոշա Խսրաբլ Սափրադ)» գլխում հեղինակը, անդրադառնալով Կալկաթայի հիմնադրմանը, գրում է. «Եթե Չոպ Չարնոքը Կալկաթայի հիմնադիրն է, ապա Մոզոլի գահակալից հիմնադրման իրավունքի ձեռք բերման հեղինակը հայ մեծ դիվանագետ Խսրաբլ Սափրադն է»: Մ. Սեթլը բերել է բազմաթիվ հետաքրքիր վավերագրեր, որոնք խոսում են այն սասին, որ հայազգի դիվանագետը իրոք մի շարք հաջող բանակցություններ է վարել Մեծ Մոզոլի գահակալներ Աուրենգզեբի և Ֆարուխ Սիարի հետ:

«Հայերը Կալկաթայում» բաժնի մյուս գլուխներից երևում է, որ XVII դարի սկզբին Կալկաթայում կար ազգային աշխույժ կյանքով ապրող հայկական մարդաշատ գաղթօջախ, որն ուներ իր եկեղեցին, ազգային կազմակերպությունները, առևտրատները: Կալկաթայի հայերի առևտրական գործունեության շրջանակները այնքան լայն էին, որ XVIII դարի 30—40-ական թթ. նրանք կառուցեցին «Հայկական» կոչվող նավահանգիստը: Ինչպես երևում է, Կալկաթայի հայությունն ունեցել է իր ղեկավար մարմինը, որն ընտրվել է շուրս տարին մեկ:

Մ. Սեթլը առանձին բաժիններ է նվիրել նաև մարդասիրական ճեմարանին, Մեսրոփ Թադեոզյանին և Կալկաթայի հայությանը վերաբերող մի քանի այլ հարցերի:

Գրքի «Հայերը լահոտում» բաժնից երևում է, որ Հնդկաստանի նախագուրը հանդիսացող լահոտը այն քաղաքներից է, որտեղ հայեր էին ապրում շատ հին ժամանակներից: XVI դարից սկսած հայերի թիվն այնքան շատ էր, որ քաղաքի թա-

ղերից մեկը կոչվում էր «հայկական»: XVII դարում լահոտի կառավարիչների մեջ եղել են հայեր: Այս գլխում հատկապես մանրամասն խոսվում է տեղի հայ արհեստավորության, հատկապես զինագործների մասին: Ի դեպ, գրախոսվող աշխատության բաժիններից մեկը նվիրված է լահոտում ապրող թնդանոթներ ձուլող Շահնազար Զուլայեցուն, որի հոշակը դուրս է եկել Հնդկաստանի սահմաններից: Եվրոպական գրականության մեջ նա հայտնի է «Հնդկական կրուպա» անունով: Նրա ձուլած «բամբակամա» կոչվող թնդանոթներով հնդիկները կովել են Պանիպատի ճակատամարտում: Շահնազար Զուլայեցու մասին խոսելիս Մ. Սեթլը գրում է. «Այն ժամանակ, երբ Շահնազար խանը թնդանոթներ է ձուլում լահոտում, նրա հայրենակից Գորգին խանը՝ Բենգալիայի նավար Միր Քասիմի զորահրամանատարը, զբաղված էր նույնանման թնդանոթներ ձուլելով Մոնգհիրում: «Սա ցույց է տալիս, — նշում է Մ. Սեթլը, — որ հայերը Հնդկաստանում նշանավոր վաճառականներ լինելուց բացի նշանավոր զինվորականներ, հրազեն և զրուկայական թնդանոթներ ձուլելու մեծ վարպետներ էին, եթե դա պահանջում էր Հնդկաստանի ազգային շահը»:

Հնդկաստանի հայերը հնդիկ ժողովրդի հակազդութային պայքարի առաջին իսկ օրից, առանց տատանվելու, կանգնել են իրենց երկրորդ հայրենիքի պաշտպանների կողքին: Մ. Սեթլը հասկանալի հպարտությամբ է այդ մասին գրել «Գորգին խան (Բենգալիայի նավարի գլխավոր հրամանատարն ու պրեմիեր մինիստրը)» գլխում: Հայերի մասնակցությունը հատկապես ահատիվ է եղել 1756—1763 թթ. հակաանգլիական ելույթի ժամանակ: Հայերի ակտիվացմանը մեծապես նպաստել է այն բանը, որ նավար Միր Քասիմը Բենգալական բանակի գլխավոր հրամանատար է նշանակել Գորգին խանին (Գրիգոր Հարությունյան):

Հենվելով հնդկական ու եվրոպական աղբյուրների վրա, հեղինակը ցույց է տվել, որ Բենգալիայի բանակում ծառայող հայ բարձրաստիճան հրամանատարների թիվն անցնում է տասնից: Հայ աշխարհազորային շուկատը մասնակցել է բոլոր խոշոր ճակատամարտերին: Ինչպես վկայում են փաստերը, հայ զինագործները եռանդուն մասնակցություն են ունեցել Մոնգհիրի զինանոցների թնդանոթների ձուլմանը, զենքի և վառոդի արտադրությանը, Հայ վաճառականները նավարին ցույց են տվել նաև դրամական օգնություն: Հնդիկ ժողովրդի հակաանգլիական ելույթը ի վերջո ավարտվեց պարտությամբ:

Անգլիական իշխանությունները, հաշվի առնելով հնդկահայերի բացահայտ թշնամական դիրքորոշումը, լոնդոնում մշակեցին և Կալկաթայի

անգլիական իշխանություններին ուղարկեցին հայերի նկատմամբ իրականացվող նոր ծրագիրը, ըստ որի հայերի նկատմամբ հալածանքները, բռնություններն այնքան անգույս դարձան, որ նրանք ստիպված հեռացան Հնդկաստանի՝ անգլիական տիրապետության տակ գտնվող գրեթե բոլոր շրջաններին: Այս հարցերին են նվիրված «Արևելա-Հնդկական ընկերությունն ու հայերը», «Գրիգոր հոռամալյան և Հովհաննես Ռաֆայել (ես մի քանի զոհեր վերտելսի բռնակալություններից)» գլուխները և այլն:

Հայտնի է, որ անգլիական բուրժուական պատմագրությունը հատկապես ջանադրաբար է ազդել Հնդկ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման առաջին շրջանի պատմությունը: Գաղութային նվաճումները ներկայացնում են որպես առևտրի համար խաղաղ թափանցումներ, արյունահեղ միջոցառումներ՝ մարդասիրական ձեռնարկներ, հնդկ ժողովրդի ազգային-ազատագրական ելույթները՝ Եվրոպայի խաղաղ վաճառականներին կողոպտելու նպատակով կազմակերպված գործողություններ:

1756 թ. Բենգալիայի նավար Սիրաջ-ուդ-Դոուլեն գրոհով առավ Կալկաթան և այնտեղից դուրս շարժեց անգլիացիներին: Անգլիական բուրժուական պատմագրության ներկայացուցիչները այդ դեպքերի մասին, ինչպես հայտնի է, միաբերան առաջ են քաշում, Կ. Մարքսի բնորոշմամբ՝ «պատմության մեջ մինչև այժմ եղած ամենից խոշոր ստերից մեկը «Black Holl»-ի (խոսքը Կալկաթայի ստորգետնյա բանտի մասին է — Ռ. Ա.) առասպելը, որի շուրջ այնքան աղմուկ են բարձրացնում անգլիական կեղծ բարեպաշտները»:

Դեպքերի ականատես, գաղութային իշխանությունների ծառայող Զոն Հոլուելը հաղորդել է, որ Կալկաթան գրավելու գիշերը «արյունարբուն և անախտ» հրամայել է փոթորիկ խցում փակել 146 անգլիացի կանանց, երեխաների և վաճառականների, որոնցից 123 հոգի օդի պակասի հետևանքով խեղդամահ են եղել: Անգամ մեր օրերում անգլիացիները սպառնալից առիթը բաց չեն խողում այս չտուգված դեպքը օգտագործել որպես հնդիկների բարբարոսության փաստ: Ժամանակին շատերն են փորձել այս կամ այն կերպ հերքելու այս կեղծիքը, սակայն կոնկրետ փաստերի պակասը նրանց հնարավորություն չի տվել այդ անելու:

Մ. Սեթը գրքի «Հայերը և Կալկաթայի «Black Holl»-ը» բաժնում նույնպես անդրադարձել է այդ հարցին: Նրա բերած անառակելի փաստերը խոսում են այն մասին, որ նախ բանտարկվածները «խաղաղ վաճառականներ, երեխաներ և կանայք» էին, այլ ռազմագերիներ և մահաքաճների թիվը ոչ թե 123 էր, այլ 14 կամ մի

քանի հոգի ավելի ծանր վիրավորներ:

Գրքի այս գլխում Մ. Սեթը հերքում է նաև անգլիական պատմագրության մեկ այլ կեղծիք ես, համաձայն որի «Black Holl»-ում իբր թե հայերը բաժանել են անգլիացիների ճակատագիրը: Մ. Սեթի բերած ռազմավիճակ փաստերը խոսում են այն մասին, որ հայկական կամավորական զորաշտակտը Կալկաթայի վրա գրոհող հնդկական զորքերի առաջին շարքերում էր, որպես դաշնակից, «Ինչպե՞ս նրանք կարող էին իշխամի գիտվել»՝ իրավամբ հարց է տալիս Մ. Սեթը:

Պատմագրության մեջ հնդկալայ գաղութայինների սոցիալական շերտավորման անձանդի ուսումնասիրողներ քաղաքացիություն են տվել այն անհիմն և սխալ կարծիքին, թե հնդկալայ համայնքները հիմնականում բաղկացած են եղել առևտրի նպատակով այս հեռուներ հասած վաճառականներից, որոնք վայելում էին Հնդկաստանի հերթափայլի բարիքները: Մ. Սեթի գրքում բերված ռազմավիճակ փաստեր վկայում են, որ, ճիշտ է, Հնդկաստանի լե՛րներին և լե՛ր արտաքին առևտրում վճռական խոսք ասող շատ հայ վաճառականներ կային, սակայն այդ համայնքների հիմնական տարրը կազմել են արհեստավորները, զանազան մասնագիտությունների գործավորները, ամեն տեսակի սե աշխատանք կատարողները:

Այս բոլորը պարզորոշ երևում է հատկապես Ագրայի, Մադրասի, Կալկաթայի, Բոմբեյի, Լահորի, Դելիի, Սուրաբի, Ֆալկենդի Սիթիի և հնդկալայ մյուս գաղութայինների հայկական դերեղմանատներից հավաքված և Մ. Սեթի կողմից բերված հարյուրավոր արձանագրություններից, որոնց մեծ մասն այսօր, դժբախտաբար, չի պահպանվել:

Շատ բարձր գնահատելով Մ. Սեթի ուսումնասիրությունների, հատկապես նրանց փաստական նյութի հարուստ արժեքը, չենք կտրուկ, սակայն, քննադատական խոսք չասել նրա մեթոդոլոգիայի, առանձին լեռնությունների և սխալների մասին:

Գտնվելով արևմտա-ևվրոպական, հատկապես անգլիական բուրժուական պատմագրության ուժեղ ազդեցության տակ, Սեթը իր ուսումնասիրությունների մեջ քննարկվող բոլոր հարցերը մեկնաբանել և լուծել է բուրժուական պատմաբանի տեսանկյունից: Նա չի անդրադարձել աշխատավոր ժողովրդին, նրա սոցիալ-տնտեսական վիճակին և խաղացած դերին հնդկալայ գաղթաբախի և Հնդկաստանի պատմության մեջ: Նրա աշխատանքների զգալի մասը նվիրված է առանձին հնդկահայ խոշոր վաճառականների, խոշաների, քաղաքական կամ ռազմական գործիչների, որոնք ժողովրդի համար, ըստ Մ. Սե-

լի, Լեդել ևն «բարի սամարացիներ», օմեծ սրբեր», «ազնիվ և շոյալ վաճառականներ», «մուկնանդ հավատացյալներ» և այլն:

Խոսելով Հնդկաստանի տնտեսական, ռազմական և մշակութային կյանքում հայերի խաղաղած այս կամ այն դերի մասին, Սեթը անհիմն կերպով գործադնատում է նրանց դերը: Երբևէ նա այնպես է ներկայացնում փաստերը, որ կարծես թև առանձին հայ գործիչներից է կախված Լեդել որոշ հնդկական ռազայությունների, նավարությունների և իշխանությունների բախտը: Ըստ Սեթի, անգլիացիներն անգամ պակասում էին հայերից և այլն:

Սեթն իր քննարկած հարցերի մեծ մասը, բնականաբար, շարադրել է Հնդկաստանի XVI—XIX դդ. ընդհանուր պատմության ֆոնի վրա: Գծարխտարար, այստեղ էլ նա հետևել է անգլիական պատմագրությանը: Ըստ նրա, Հինդկաստանի զաղութացման ընթացքը «առևտրի համար կատարվող խաղաղ լուսանցում կրա: Հակազաղութային առաջին ապստամբության ղեկավար Սիրաջ-ոդ-Գաուլեն, «հրեշ էր մարդիկ կերպարանքով»: Անգլիացիների դեմ իրենց ազգային անկախության համար մարտնչող մարաթհները ներկայացված են իրեն սավազակներ, իսկ 1757—1759 թթ. հակազաղութային, ազգային-ազատագրական ապստամբության հետևանքով տարինները՝ «հնդկական խռովության սև օրեր» և այլն:

Մ. Սեթը, հակասելով ինքն իրեն և աշխարհը անելով իր իսկ բերած բազմաթիվ փաստերը, որոնք մերկացնում են անգլիական գաղութարարների վարած Լրկդիմի, կեղծ դիվանագիտությունը հնդկահայության նկատմամբ, նրանց կողմից հայերի՝ որպես կայսրության և բնկերության թշնամիների հալածանքը, պնդում է, թե իբր հնդկահայերը ճայնքան էին ջերմ, այնքան էին շնորհակալության կապված անգլիական ազգին, որ անընդհատ կրկնում էին. «սանձափ ուրախ ենք, որ մեզ երջանկություն է բաժին ընկել ապրելու անգլիական ազգի իշխանության տակ»: Ի միջի այլոց, խոսքը այն տարիների մասին է, երբ հնդկահայերը զենքով ձեռքներին հնդիկների կողքին կռվում էին անգլիացիների դեմ:

Հայ-հնդկական հարաբերությունների և հնդկահայ գաղթօջախների պատմության առանձին հարցեր Մ. Սեթը շարադրել է գաղութային իշխանությունների վարած քաղաքականության և ճիզվիտ բարոգիչների Հնդկաստանում ծավալած գործունեության լուսիս տակ: Նրա գրքի ամենից ընդարձակ գլուխները գրեթե ամբողջությամբ նվիրված են ճիզվիտների գործունեությանը Հնդկաստանում և ոչ մի կապ չունեն հնդկահայության հետ: Նա երբեմն միտումնա-

վոր վերաբերմունք է ցույց տալիս, չի վստահում տեղական, իր խոսքերով ասած՝ «միսուլ» սանական աղբյուրներին՝ այն դեպքում, երբ կատարյալ պատմական ճշմարտություն է համարում ամեն տեսակի բարի ճիզվիտ բարոգիչ հայերին հաղորդած խեղաթյուրումները: Պատմական այս կամ այն իրադարձության մասին երբեմն արտահայտում է լուրջ, առարկություն չվերցնող մտքեր, որոնք հիմնված են պատմական հավաստի փաստերի վրա: Սակայն նրանց նույն տեղում, որպես իր մտքերի առավել հաստատուն հավաստիացում, մեջբերումներ է անում Աստվածաշնչից, Ավետարանից և այլ կենդեցական գրքերից:

Նա հաճախ բեքում է շատ արժեքավոր բաղվածքներ, մտքեր, փաստեր, բայց չի տալիս իր գնահատականները, մեկնաբանումները: Նրա աշխատության մի շարք գլուխներ ամբողջովին բաղկացած են մեկ կամ մի քանի խոսքով իրար կապված փաստական նյութից:

«Հայերը Հնդկաստանում» դրքի առանձին գլուխների տակ շարադրված նյութը Լորենցի համապատասխանում վերնագրին: Այնտեղ տրված են լինում ավելորդ, թեմայի հետ ոչ մի կապ չունեցող նյութեր:

Գրքի երկու գլուխները՝ «Կապիտան Ուիլյամ Հոկինսը» և «անգլիական Ջեյմս Ուոթսոնի առաջին պատվիրակը Մեծ Մոզոլի» պալատում և «Պրինց Ջոն Ֆիլիպպ Բուրբոնը Մեծ Մոզոլի պալատում» ոչ մի կապ չունեն հնդկահայ գաղթօջախների պատմության հետ: Եվրոպացի այս բախտախնդիրներին նա տեղ է տվել միայն այն քանի համար, որ նրանք ամուսնացած էին հնդկական պալատին մոտ կանգնած հայուհիների հետ:

Հեղինակը երբեմն լողնում է հիմնական նպատակը, անցնում բոլորովին այլ հարցի և գլխավորը, քննության առկա հարցը այնպես էլ մնում է չլուսարանված. կան նաև կրկնություններ և այլն:

Սեթյանի աշխատանքի լրերություններից պետք է համարել նաև այն, որ իր ծավալուն աշխատանքում, բացի Թ. Խոջամալյանի «Պատմություն Հնդկացի աշխատությունից, չի օգտագործել հայկական, անգամ հնդկահայ որևէ սկզբնաղբյուր, ոչ մի փաստաթուղթ կամ ուսումնասիրություն, որի պատճառով էլ այն միակողմանի է և, բնականաբար, հեռու հայ-հնդկական հարաբերությունների և հնդկահայ գաղթօջախի ճշմարտացի պատկերը տալուց:

Բերված հարուստ և արժեքավոր փաստական նյութը ներկայացնելիս Մ. Սեթը հաճախ մոռանում է կամ հեղինակին, կամ սկզբնաղբյուրի վերնագիրը: Երբեմն անհրաժեշտ է լինում երկար

աշխատանք կատարել պարզելու համար բերված փաստի հավաստիությունը:

Խոսելով տարիների իր կատարած թրտնաշան, ամեն տեսակ դժվարություններով լի, հոգեմաշ աշխատանքի մասին, նա գրել է, որ ինքը մեկ նպատակ է ունեցել՝ «փրկել կորուստից և մոռացությունից հայկական հետքերը Հնդկաստանում»:

Ի պատիվ Սեթի պետք է ասել, որ նրան պատվով է հաջողվել կատարել այս մեծ ու դժվար խնդիրը: Սեթի ուսումնասիրությունների շնորհիվ կորստից փրկվել են հարյուրավոր հայերեն արձանագրություններ, որոնք

այժմ չկան: Ձեռն պահպանվել նաև պատմական և գրական մի շարք հուշարձաններ, որոնք ժաժտնակին օգտագործել և մեջբերումներ է արել հեղինակը: Եթե չլինեին Սեթի ուսումնասիրությունները, հազիվ թե այսօրվա հնդկահայ գաղթօջախների պատմությունն ուսումնասիրող պատմաբանը ձեռքի տակ ունենար Հնդկաստանի արխիվում և մամուլում ցրված այն արժեքավոր և հարուստ փաստերը, որոնք իր գրքում բերել է մեղվաջան գիտնականը:

Պատմ. գիտ. զոկտոբ. Ռ. Ա. ԱՅՐԱՆԱՄՅԱՆ

NIELS STEENSGAARD. *The Asian Trade Revolution of the Seventeenth Century*. The University of Chicago Press, Chicago and London, 1974, 441p., 20 tables, 2 maps, 1 diagram

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների և, մասնավորապես, դեպի Հնդկաստան տանող օվկիանոսային ուղու հայտնագործման ազդեցությունը Արևելք—Արևմուտք առևտրի վրա վաղուց ի վեր գտնվում է պատմաբանների և տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Իրենց հերթին, Մերձավոր Արևելքի երկրների առևտրական հարաբերությունները արևմտյան երկրների հետ, որոնք հայտնի են որպես «Լեանտյան առևտուր», բազմիցս լուսարանվել են գիտական գրականության մեջ: Ուսումնասիրողները միաբերան այն տեսակետն են հայտնել, որ այդ առևտուրը հավասարապես կարևոր նշանակություն ունի և՛ Մերձավոր Արևելքի, և՛ Արևմտյան Եվրոպայի երկրների համար: Հետաքրքրություն այս խնդրի նկատմամբ ըթուլացավ նաև Վ. Հեյդի «Լեանտյան առևտրի պատմություն» ֆունդամենտալ ուսումնասիրությունից հետո: Կարելի է վստահորեն ասել հակառակը՝ այն ավելի սրեց ուսումնասիրողների ուշադրությունը այս հարցի նկատմամբ: Հարկ է նկատել, որ Վ. Հեյդի աշխատությունը նկատելի ազդեցություն ունեցավ հետագա ուսումնասիրողների վրա, որոնցից շատերը, սակայն, նկատեցին նրա թերությունները, մասնավորապես արևելյան աղ-

բյուրների թերի օգտագործումը², Բացի այդ, նյութի հսկայական ծավալը և քննարկվող հարցերի բարդությունները թույլ չտվեցին Վ. Հեյդին անհրաժեշտ ուշադրություն նվիրել Լեանտյան առևտրում առանձին երկրների դերին, ինչպես նաև նրա հետևանքներին XVI—XVIII դդ.: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է սովետական պատմաբան Մ. Ի. Տիկաձեն, Ժամանակակից ուսումնասիրողը, հենվելով արևմտյան և արևելյան աղբյուրների շարունակ աճող թվի վրա, կարող է ոչ միայն պատկերացում կազմել Լեանտյան առևտրի վերաբերյալ որպես միջազգային երևույթի, այլև շաղկապել այն առանձին երկրների ներքին պրոցեսների հետ և պարզարանել այդ առևտրի կոնկրետ սոցիալ-տնտեսական հետևանքները³: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում վերանայելու Վ. Հեյդի այն տեսակետները, որոնք վերաբերում են Լեանտյան առևտրի անկման ժամանակին և պատճառներին, քանի որ նրա աշխատությունից հետո ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ լայն

² H. Inalcik. Bursa and the Commerce of the Levant.—*Journal of Economic and Social History of the Orient*, vol. III, part 2, 1960, p. 134.

³ М. И. Тикадзе. Левантийская торговля и города Сирии в XVI—XVIII вв.—*История и экономика арабских стран*, М., 1977, с. 122.

¹ W. Heyd. *Geschichte des Levantehandels im Mittelalter*. Bd. I—II, Stuttgart, 1879.